ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երեւան 27 մայիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի
Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով քաղաքացի Դավիթ Ասատրյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց.

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Դավիթ Ասատրյանը 04.05.2016թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան խնդրելով՝ «ՀՀ Սահմանադրության 34-րդ, 51-րդ, 61-րդ եւ 63-րդ, 78-րդ, 79-րդ հոդվածներին հակասող եւ անվավեր ճանաչել ՀՀ «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 37-րդ հոդվածի առաջին մասը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը»:

Դիմողը գտնում է, որ դատական ակտով իր նկատմամբ կիրառված՝ վիճարկվող դրույթներին դատարանների կողմից տրված մեկնաբանության արդյունքում խախտվել են Սահմանադրության 2-րդ գլխով երաշխավորված իր հիմնական իրավունքները եւ ազատությունները:

Ըստ դիմողի՝ անձը, դիմելով վարչական մարմնին տեղեկատվություն ստանալու համար, հետագայում զրկվում է նույնաբովանդակ տեղեկատվություն ստանալու համար կրկին վարչական մարմնին դիմելու հնարավորությունից և միաժամանակ կորցնում է նաև դատական պաշտպանության իրավունքը:

2. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործը ենթակա է մերժման հետեւյալ պատճառաբանությամբ:

«Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի առումով դիմումին կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունը վկայում է, որ վիճարկվող դրույթներից՝ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասը դիմողի նկատմամբ չի կիրառվել: Դիմողի նկատմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դատարանի կողմից՝ վիճարկվող դրույթի կիրառումը՝ որպես անհատական դիմումին ներկայացվող պայման, ի թիվս այլնի, նախատեսված է «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասով: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշման մեջ իրավական դիրքորոշում է արտահայտել առ այն, որ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասում նշված որևէ պայմանի բացակայության դեպքում անհատական դիմում ներկայացրած ֆիզիկական կամ իրավաբանական անձը սահմանադրական դատարան դիմելու համար իրավասու սուբյեկտ չէ: Հետևաբար, այս առումով առկա է անհատական դիմումի հիման վրա գործի քննությունը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված հիմք:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 79-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի առումով դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ նշյալ դրույթի մասով դիմումն ակնհայտ անհիմն է: Այսպես, դիմողը չի ներկայացրել որևէ իրավական հիմնավորում վիճարկվող դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության վերաբերյալ: Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասի՝ որպես անհատական դիմումի ընդունելիության պարտադիր պայման է հանդիսանում դիմումի՝ ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումների առկայությունը: Այս համատեքստում ՀՀ սահմանադրական դատարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է արտահայտել առ այն, որ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հատկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ առկա չէ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված՝ խնդրո առարկա դրույթի ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում:

Միաժամանակ, դիմողը հիմնավոր եւ պատշաճ ձեւով չի հիմնավորել, թե վիճարկվող նորմի «հակասահմանադրականության» արդյունքում իր որ սահմանադրական իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի եւ վիճարկվող դրույթի հակասահմանադրականության միջև պատճառահետևանքային կապի առկայությունը, ինչն ըստ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի եւ ՀՀ սահմանադրական դատարանի ՍԴՈ-839 որոշման մեջ արտահայտված իրավական դիրքորոշման՝ անհատական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի առնչությամբ կարծում ենք, որ դիմողի համար առաջացած անբարենպաստ հետեւանքները նրա նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետևաբար, խնդրո առարկա դրույթի սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց՝ փորձելով այն քողարկել խնդրո առարկա դրույթի հակասահմանադրականության վիճարկմամբ: Մասնավորապես, դիմողը, բաց

թողնելով վարչական դատարան հայց ներկայացնելու համար նախատեսված ժամկետները, չներկայացնելով միջնորդություն բաց թողնված ժամկետները վերականգնելու վերաբերյալ, դրա փոխարեն կրկին անգամ վարչական մարմնին դիմելով՝ իրականում կարծես թե վարչական դատարան դիմելու համար նախատեսված ժամկետների հաշվարկման նոր հնարավորություն է փորձել ստեղծել իր համար: Ինչպես նշել է ՀՀ վարչական դատարանը 2015 թվականի օգոստոսի 3-ի՝ հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման մեջ, «...10.02.2015 թվականից էլ, երբ հայցվորը ստացել է Կենտրոնական բանկի թիվ 24-15/000242.15 գրությունը, վերջինիս համար բացահայտվել է օրենքով նախատեսված տեղեկությունը պատասխանողի կողմից չտրամադրելու հանգամանքը, ուստի հայցադիմումը Դատարան կարող էր ներկայացվել 10.02.2015 թվականից հետո՝ երկամսյա ժամկետում, մինչդեռ տվյալ դեպքում հայցադիմումը Դատարան է ներկայացվել միայն 27.07.2015 թվականին...»: Հետևաբար, դիմողի ներկայացրած փաստարկներն առ այն, որ՝ «... «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» օրենսգրքի 37-րդ հոդվածի 1-ին մասի երկամսյա ժամկետը չի տարածվում այն դեպքի վրա, երբ անձը մեկ անգամ արդեն իսկ դիմած է լինում վարչական մարմին, քանի որ համաձայն օրինական դատական ակտի՝ դատարանում հայց ներկայացնելու համար սահմանված ժամկետը չի կարող տարածվել յուրաքանչյուր նույնաբովանդակ դիմումի վրա», վկայում են այն մասին, որ վերոհիշյալ դրույթի սահմանադրականության հարցի վիճարկման պահանջի քողի ներքո դիմողն իրականում բարձրացնում է դրա կիրառման իրավաչափության հարց: Համաձայն ՀՀ սահմանադրական դատարանի 17.03.2009թ. ՍԴԱՈ-21 որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշման՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձեւականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով: Հետևաբար, այս առումով առկա է դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախատեսված հիմք:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց.

Դավիթ Ասատրյանի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

27 մայիսի 2016 թվականի
ՍԴԴԿՈ/2-13